

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԿԱՊԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 2001–2010 ԹԹ.**

**DEVELOPMENT OF HUMANITARIAN TIES BETWEEN THE REPUBLIC OF
ARMENIA AND THE RUSSIAN FEDERATION IN 2001–2010**

**РАЗВИТИЕ ГУМАНИТАРНЫХ СВЯЗЕЙ МЕЖДУ РЕСПУБЛИКОЙ АРМЕНИЯ
И РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИЕЙ В 2001–2010 ГГ.**

Ռուբեն Ազիզբեկյան
Ruben Azizbekyan
Рубен Азизбемян

Պատմության ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of History, National Academy of Sciences, Armenia
Институт истории, Национальная академия наук, Армения

Ruben.azizbekyan@academhistory.am

Ներկայացվել է՝ 07.02.2026; գրախոսվել է՝ 22.05.2026; ընդունվել է՝ 15.07.2026
Received: 07.02.2026; Revised: 22.05.2026; Accepted: 15.07.2026
Представлено: 07.02.2026; рецензировано: 22.05.2026; принято: 15.07.2026

© Հեղինակ, 2026: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով
© The Author, 2026. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
© Автор, 2026. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2026.2-46

Ամփոփում – ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև բազմակողմ միջպետական հարաբերությունների կարևորագույն բաղադրիչներից էր համագործակցությունը հումանիտար ոլորտում: Դա պատահական չէր, քանի որ հայ և ռուս ժողովուրդների հարուստ պատմամշակութային, հոգևոր, նյութական արժեքների միահյուսման դարավոր ավանդույթները XXI դ. սկզբին դարձան ՀՀ-ի և ՌԴ-ի միջև հումանիտար կապերի զարգացման ամուր հենքը: 1990-ական – 2010 թթ. ընթացքում ձևավորվեց ծանրակշիռ իրավապայմանագրային դաշտ, որի վրա հիմնվում էր երկու երկրների փոխգործակցությունը հումանիտար բնագավառում: Ընդ որում, այդ իրավական հիմքը շարունակաբար կատարելագործվում էր՝ համապատասխանեցվելով արդի պահանջներին և երկկողմ հարաբերությունների զարգացման տրամաբանությանը: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Հայաստանի և Ռուսաստանի միջև միջպետական ձևաչափում ընդլայնվում էր բազմակողմ հումանիտար համագործակցությունը՝ ընդգրկելով մշակույթի, կրթության, գիտության, տեղեկատվական և այլ ոլորտներ: Այն բխում էր ոչ միայն միմյանց հոգևոր-մշակութային արժեքներին անմիջական հաղորդակից լինելու երկու ժողովուրդների պահանջմունքից, այլև երկու պետությունների ազգային շահերից, քանի որ հումանիտար կապերի զարգացումը նպաստում էր փոխըմբռնման ու փոխվստահության խորացմանը, ինչը ռազմավարական գործընկերության ամրապնդման կարևոր հիմքերից էր:

Abstract – Following the collapse of the USSR, cooperation in the humanitarian sphere became one of the most important components of bilateral interstate relations between the Republic of Armenia and the Russian Federation. This was no coincidence, as centuries-old traditions of interwoven historical, cultural, spiritual, and material values of the Armenian and Russian peoples formed a solid foundation for the development of humanitarian ties between the Republic of Armenia (RA) and the Russian Federation (RF) at the beginning of the 21st century. From the 1990s through 2010, a significant legal and contractual framework was established to serve as the basis for interaction between the two countries in the humanitarian domain. Moreover, this framework was continually updated to reflect contemporary requirements and the spirit of bilateral relations. During the period under study, humanitarian cooperation expanded through strategic interstate formats between Armenia and Russia, covering culture, education, science, and the media sector. This arose not only from the mutual desire of both peoples to engage with each other's spiritual and cultural values, but also from the national interests of both states, as the development of humanitarian ties contributed to deepening mutual understanding and trust – one of the vital foundations for strengthening their strategic partnership.

Аннотация – После распада СССР в развитии многогранных отношений между Республикой Армения и Российской Федерацией важнейшим компонентом являлся гуманитарный блок сотрудничества. Это не случайно, поскольку именно богатое культурно-историческое наследие, вековые традиции переплетения духовно-культурных ценностей армянского и русского народов стали прочной основой развития гуманитарных связей между РА и РФ в начале XXI века. В период с 1990-ых по 2010 гг. формировалась солидная договорно-правовая база, на которую опиралось взаимодействие двух стран в гуманитарной сфере. При этом, данная договорно-правовая база обновлялась в соответствии с требованиями времени и духом двусторонних отношений. В исследуемый период между Арменией и Россией в межгосударственном формате расширялось многостороннее гуманитарное сотрудничество, которое охватывало сферы культуры, образования, науки, информации и т.д. Оно исходило не только из потребности двух народов в непосредственном приобщении к духовно-культурным ценностям друг друга, но и из национальных интересов сторон, поскольку развитие гуманитарных связей способствовало углублению взаимопонимания и взаимного доверия, что являлось одним из важных фундаментов укрепления стратегического союзничества.

Հիմնաբառեր – ՀՀ, ՌԴ, ռազմավարություն, մշակույթ, կրթություն:

Keywords – RA, RF, strategy, culture, education.

Ключевые слова – РА, РФ, стратегия, культура, образование.

Ներածություն

XXI դ. սկզբին ՀՀ-ի և ՌԴ-ի միջև համապարփակ հարաբերությունների զարգացման գործում կարևոր դեր էին խաղում երկու ժողովուրդների միջև դարերի ընթացքում ձևավորված և արմատավորված հումանիտար կապերը, որոնք հետխորհրդային շրջանի սկզբներին որոշ ընդհատումից հետո նշյալ ժամանակաշրջանում նոր փուլ թևակոխեցին: Երևանն ու Մոսկվան հետևողականորեն շարունակում էին միջպետական մակարդակով զարգացնել 1990-ա-

կանների կեսերից երկու երկրների միջև հումանիտար բնագավառում վերստին ծավալված փոխգործակցությունը: Այն աստիճանաբար կարևոր տեղ զբաղեցրեց հայ-ռուսական հարաբերություններում: Վերջինիս ակնբախ վկայություններից էր այդ ընթացքում հումանիտար ոլորտում Հայաստանի և Ռուսաստանի միջև փոխգործակցության իրավական կանոնակարգմանը միտված ավելի քան 20 համաձայնագրի և կազմակերպչական այլ փաստաթղթերի ստորագրումը (Ռուսաստանը և Հայաստանը համաշխարհային և տարածաշրջանային քաղաքականության համատեքստում 2010, 41): Ըստ էության, ստեղծվել էր մի ընդգրկուն իրավապայմանագրային հենք, որը ներառում էր համագործակցության բազմակողմ ձևաչափեր:

Մշակութային կապերի զարգացումը

1990-ականների կեսերից վերստին սկսեցին ծավալվել հայ-ռուսական մշակութային համապարփակ շփումները, որոնք 2000-ականների սկզբներին զգալիորեն ակտիվացան: 2001 թ. նոյեմբերին ՀՀ-ի և ՌԴ-ի համապատասխան գերատեսչությունների ու հասարակական կազմակերպությունների համատեղ հովանավորությամբ Ռուսաստանում անցկացվեցին Հայաստանի մշակույթի օրեր: Մոսկվայում հանդես եկան ՀՀ-ից ժամանած երաժշտական խմբեր, պարի համույթներ, անհատ կատարողներ: Նկարչի կենտրոնական տանը և ցուցահանդեսային այլ հարթակներում բացվեցին Հայաստանի ազգային պատկերասրահի և Ս. Փարաջանովի տուն-թանգարանի հավաքածուների ցուցադրություններ: Կազմակերպվեց հայկական կինոյի փառատոն և այլն (ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ց. 6, գ. 108, 141–143): 2002 թ. նոյեմբերին ՀՀ և ՌԴ մշակույթի նախարարությունների միջև ստորագրվեց եռամյա (2003–2005 թթ.) մշակութային համագործակցության մասին ծրագիր, որի հիման վրա մշակվեց այդ բնագավառում փոխգործակցության 10-ամյա հեռանկարային ծրագիր (ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ց. 10, գ. 114, 112): Նույն թվականին Երևանում բացվեց Ռուսարտկենտրոնի ներկայացուցչությունը, որը հետագայում վերանվանվեց ԱՊՀ-ում, արտասահմանում ապրող հայրենակիցների և միջազգային հումանիտար համագործակցության գործերով Դաշնային գործակալություն՝ Ռուսահամագործակցություն: 2003 թ. հունվարին ստորագրվեց «Մշակույթի բնագավառում համագործակցության մասին համատեղ հռչակագիր» (Оганизация 2012, 85): 2007 թ. Երևանում սկսեցին գործել «Մոսկվայի տուն», Մոսկովյան մշակութային-գործարար ու Սանկտ Պետերբուրգի տեղեկատվական-գործարար կենտրոնները, իսկ 2008 թ.՝ Գիտության և մշակույթի ռուսական կենտրոնը (Российско-армянское гуманитарное сотрудничество 2011, 12 октября; Ռուսաստանը և Հայաստանը համաշխարհային և տարածաշրջանային քաղաքականության համատեքստում 2010, 42):

Երկու ժողովուրդների մշակույթների երկխոսության վառ դրսևորումներից էր 2005 թ. Հայաստանում Ռուսաստանի տարվա և 2006 թ. Ռուսաստանում Հայաստանի տարվա անցկացումը: Դա նշանակալի իրադարձություն էր ՀՀ-ի

և ՌԴ-ի միջև բազմաբնույթ համագործակցության տարեգրության մեջ: Այդ ընդգրկումն մշակութային փառատոների ծրագրերում ներառված էին նաև ծանրակշիռ կրթական և տեղեկատվական միջոցառումներ (Российско-армянское гуманитарное сотрудничество 2011, 12 октября): 2006 թ. հայ մշակույթի օրեր անցկացվեցին նաև ՌԴ տարբեր մարզերում:

2007 թ. մայիսին Հայաստանի մշակույթի և երիտասարդության հարցերի ու Ռուսաստանի մշակույթի և զանգվածային հաղորդակցության նախարարությունների միջև կնքվեց «Մշակույթի բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը (ՀՀ միջազգային պայմանագրերի պաշտոնական տեղեկագիր, երկկողմ միջազգային պայմանագրեր 2008, 176–181): Դրա շնորհիվ ռուսական մշակույթն ու արվեստը կանոնավոր կերպով սկսեցին ներկայացվել Հայաստանում կազմակերպվող տարբեր փառատոներում, իսկ հայկականը՝ Ռուսաստանում: Երկու երկրներում պարբերաբար կազմակերպվում էին նաև թատերախմբերի, երաժշտական համույթների, արվեստի առանձին գործիչների հյուրախաղեր և նկարիչների ցուցահանդեսներ: Հայ հրատարակիչներն ու գրատարածողները կանոնավոր մասնակցում էին Ռուսաստանում անցկացվող գրքի միջազգային ցուցահանդես-տոնավաճառներին: Ակտիվորեն համագործակցում էին նաև ՌԴ պետական և ՀՀ ազգային գրադարանները, երկու երկրների արխիվային գերատեսչությունները, թանգարաններն ու այլ մշակութային հաստատությունները: Վերստին աշխուժացան հայ-ռուսական գրական կապերը: Աստիճանաբար վերականգնվեց նաև երկու երկրների գրական շրջանների ներկայացուցիչների միջև պարբերաբար անցկացվող հանդիպումների բարի ավանդույթը: 2008 թ. ապրիլին Երևանում բացվեց Ռուսական գրքի կենտրոն: Նույն թվականին ՀՀ-ում կազմակերպվեց Ռուսական մշակույթի սեզոն, իսկ 2009 թ. ՌԴ-ում՝ Հայկական մշակույթի սեզոն:

Նման միջոցառումների իրականացումը հնարավորություն էր ընձեռում երկու երկրների ժողովուրդներին ոչ միայն անմիջականորեն շփվելու հայկական և ռուսական հոգևոր-մշակութային արժեքների հետ, այլև որոշակի պատկերացում կազմելու միմյանց պատմությունների ընդհանրությունների մասին: Դա նպաստում էր ՀՀ-ի ու ՌԴ-ի միջև միջպետական հարաբերությունների զարգացմանը:

Համագործակցությունը կրթության բնագավառում

Քննվող ժամանակափուլում հայ-ռուսական փոխգործակցությունը հաջողությամբ ծավալվում էր նաև կրթության՝ հատկապես բարձրագույն կրթության ոլորտում: 1999 թ. փետրվարին Երևանում իր գործունեությունը սկսեց Հայ-ռուսական համալսարանը (ՀՌՀ), որը հիմնականում սուբսիդավորվում էր ՌԴ դաշնային բյուջեի կողմից: Այսպես՝ 2009 թ. ռուսաստանյան կողմը ՀՌՀ-ին հատկացրել էր ավելի քան 65 մլն ռուբլի, 2010 թ.՝ 68 մլն ռուբլի, 2011 թ.՝ շուրջ 74 մլն ռուբլի (Российско-армянское гуманитарное сотрудничество 2011, 12 октября): Այստեղ սովորում էր ավելի քան 2000 ուսանող, ընդ որում ընդունվողներ

րի 25%-ը ԱՊՀ մասնակից պետություններից էին՝ առավելապես Ռուսաստանից եկած քաղաքացիներ (История дипломатических отношений России и Армении 2006, 30 октября): ՀՀ և ՌԴ պետական բուհի կարգավիճակ ունեցող ՀՌՀ-ն համագործակցում էր ռուսաստանյան մի շարք առաջատար ուսումնական հաստատությունների հետ՝ Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանը (ՄՊՀ), Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտը, ՌԴ ԱԳՆ դիվանագիտական ակադեմիան և այլն:

2010 թ. առաջին կեսին Հայաստանում ընդհանուր առմամբ գործում էր Ռուսաստանի պետական և ոչ պետական բուհերի 11 մասնաճյուղ, որոնցում սովորում էր շուրջ 3 հազ. ուսանող (История дипломатических отношений России и Армении 2006, 30 октября): Միջբուհական փոխգործակցության ընդլայնմանը զգալիորեն նպաստեց ՀՀ և ՌԴ գիտության ու կրթության նախարարությունների միջև 2004 թ. հուլիսին կնքված «Կրթության ոլորտում համագործակցության մասին համաձայնագիրը» (ՀՀ միջազգային պայմանագրերի պաշտոնական տեղեկագիր 2005, 221–225): Վերջինիս իրականացման ակնբախ դրսևորումներից էր ՌԴ դաշնային բյուջեի հաշվին ՀՀ քաղաքացիների ուսումնառությունը Ռուսաստանի բուհական և հետբուհական կրթական հաստատություններում: 2005/2006 թթ. ուսումնական տարվա համար Հայաստանին հատկացվեց 175 նման քվոտա, իսկ 2007/2008 թթ. համար՝ 260: 2008 թ. Ռուսաստանի բուհերում սովորում էր ավելի քան 5 հազ. Հայաստանի քաղաքացի, որոնցից շուրջ 4 հազարը՝ կրթության ծախսերի լրիվ փոխհատուցմամբ (Российско-армянское гуманитарное сотрудничество 2011, 12 октября):

2007 թ. հայկական կողմը հանդես եկավ Երևանում ՄՊՀ-ի մասնաճյուղի բացման առաջարկությամբ, որն իրականացվեց 2015 թ. մարտին: Հատկանշական էր, որ խնդրո առարկա ժամանակափուլում Երևանի պետական համալսարանը (ԵՊՀ) համագործակցում էր Ռուսաստանի ավելի քան 70 բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ, որոնց թվում էին ՄՊՀ-ն, Սանկտ Պետերբուրգի Գերցենի անվան պետական մանկավարժական համալսարանը, Կուբանի պետական համալսարանը, Սիբիրյան դաշնային համալսարանը և այլն:

2010-ականներին ՀՀ-ի և ՌԴ-ի միջև բարձրագույն կրթության բնագավառում փոխգործակցության կարևորագույն բաղադրիչներից էր լեզվամշակութային ոլորտը: Այսպես օրինակ՝ ռուսաց լեզվի ուսումնասիրության ծրագրերին աջակցություն ցուցաբերելու նպատակով 2008 թ. փետրվարին ԵՊՀ-ում բացվեց «Ռուսական կենտրոն», որն առաջինն էր հետխորհրդային տարածքում (Российско-армянское гуманитарное сотрудничество 2011, 12 октября): Սակայն լեզվամշակութային համագործակցությունը չէր սահմանափակվում զուտ միջբուհական շրջանակներով: 2001 թ. աշնանը Երևանում բացվեց Ռուսաց լեզվի զարգացման հայկական կենտրոն (История дипломатических отношений России и Армении 2006, 30 октября): Այն հիմնականում համագործակցում էր Հայաստանի ռուսաց լեզվի խորացված ուսումնասիրությամբ դպրոցների հետ՝ նրանց ապահովելով ուսումնամեթոդական, տեղեկատվական և գեղարվես-

տական ռուսերեն գրականությունով, ինչպես նաև անհրաժեշտ տեխնիկական միջոցներով (Из доклада Министерства иностранных дел Российской Федерации, «Русский язык в мире» 2003): Աշխարհում 2007 թ. նշվող «Ռուսաց լեզվի» տարվա շրջանակում, ռուսաստանյան կողմի աջակցությամբ, Հայաստանում կազմակերպվեցին ռուսական գրքերի շնորհանդեսներ ու ցուցահանդեսներ (ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ց. 13, գ. 103, 26): Հանրապետությունում հրատարակվում էր նաև «Ռուսաց լեզուն Հայաստանում» եռամսյա հանդեսը (Григорян 2018, 92): Փաստորեն, XXI դ. սկզբներին ՀՀ-ում ռուսաց լեզուն, որպես ազգային շփման լեզու, պահպանվում էր՝ դասավանդվում էր դպրոցներում ու բուհերում, վայելում պետական հովանավորություն: Մինչդեռ Ռուսաստանում ստվարաթիվ հայ համայնքի առկայության պայմաններում 2000-ականների սկզբին գործում էր պետական հովանավորություն վայելող հայկական թեքումով ընդամենը երեք հանրակրթական հաստատություն: Երկուսը՝ Մոսկվայում և մեկը՝ ՌԴ ամենահայաշատ հարավային տարածաշրջանում՝ Ադլերում: Բնականաբար, դա չէր կարող բավարարել Ռուսաստանի մեծաթիվ հայության լեզվամշակութային պահանջմունքները: Տիրող իրավիճակը պահանջում էր երկու երկրների պատկան մարմինների փոխգործակցությամբ համապատասխան քայլերի ձեռնարկում. 2001 թ. Մոսկվայի պետական լեզվաբանական համալսարանի հենքի վրա հիմնվեց Հայոց լեզվի և մշակույթի կենտրոնը (История дипломатических отношений России и Армении 2006, 30 октября): Նրա ջանքերով 2009 թ. ռուսերենով հրատարակվեց «Հայոց լեզուն ԱՊՀ երկրների համար» ուսումնական ձեռնարկը: Հայագիտական ամբիոններ էին հիմնվել Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի, Նիժնի Նովգորոդի համալսարաններում: 2012 թվականից Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի Ասիայի և Աֆրիկայի ինստիտուտում հայոց լեզուն դարձավ պարտադիր դասավանդող առարկա՝ որպես առաջին արևելյան լեզու (Саядов 2013, 75): Հումանիտար ոլորտում հայ-ռուսական համագործակցության հետագա ընդլայնման շնորհիվ արդեն 2000-ականների երկրորդ տասնամյակի սկզբին ՌԴ-ում հայոց լեզու դասավանդվում էր հայերի համահավաք բնակության տարածաշրջաններ Կրասնոդարի, Ստավրոպոլի երկրամասերում, Ռոստովի ու Բրյանսկի մարզերում: Սակայն դա դեռևս բավարար չէր Ռուսաստանում հայոց լեզվի լիարժեք վերարտադրման համար, քանի որ դպրոցներում և ուսումնական հաստատություններում հայոց լեզվի դասավանդման մակարդակը հիմնականում դեռևս հեռու էր բավարար լինելուց: Բացակայում էին հայոց լեզվի և գրականության առարկաների ուսումնական միասնական ծրագրերը, չկային միասնական դասագրքեր, գեղարվեստական, պատմամշակութային ու այլ բնույթի հայատառ գրքեր և այլն:

Գիտական կապերի զարգացումը

Այս ընթացքում ՀՀ-ի և ՌԴ-ի միջև վերականգնվում և զարգանում էին գիտական ավանդական կապերը: Հընթացս ընդլայնվում էր համագործակցու-

թյունը Հայաստանի գիտությունների ազգային (ՀՀ ԳԱԱ) և Ռուսաստանյան գիտությունների ակադեմիաների (ՌԳԱ) միջև: 2004 թ. սկիզբ առավ փոխգործակցությունը ՀՀ ԳԱԱ-ի և ՌԴ Հարավային գիտական կենտրոնի միջև: Վերստին աշխուժացան կապերը առանձին գիտական հաստատությունների և կազմակերպությունների միջև: Երկու երկրների նույնապարֆիլ գիտական հաստատությունների միջև համագործակցության վերահաստատման ու խորացման շնորհիվ հատկապես բնական գիտությունների շատ ճյուղերում իրականացվում էին համատեղ հետազոտական ծրագրեր: 2004 թ. Սևանա լճի վրա սկսեց գործել հայ-ռուսական ջրակենսաբանական արշավախումբը, ՌԳԱ մակաբուծաբանության ինստիտուտում գործում էր ՀՀ ԳԱԱ կենդանաբանության ինստիտուտի հետ համատեղ փորձարարական մակաբուծաբանության լաբորատորիան, իսկ 2010-ին Երևանի Գիտության և մշակույթի ռուսական կենտրոնի հենքի վրա բացվեց ռուս-հայկական համագործակցության նորարական կենտրոնը (Российско-армянское гуманитарное сотрудничество 2011, 12 октября) և այլն:

Հայ-ռուսական սերտ փոխգործակցությամբ և գրեթե լիակատար փոխըմբռնմամբ աչքի էր ընկնում հումանիտար գիտությունների՝ հատկապես պատմագիտության բնագավառը: Հրատարակվում էին համատեղ ձեռնարկներ և ժողովածուներ, որոնցում հստակորեն նշմարվում էր երկու երկրների հեղինակների կողմից հավասարակշռված և բազմակողմանի գնահատականների մշակման ձգտումը (Освещение истории России и народов постсоветских стран в школьных учебниках истории новых независимых государств 2009, 87):

Հումանիտար գիտությունների բնագավառում սերտ կապեր էին հաստատվել նաև հայագիտական ուղղվածությամբ ՀՀ հաստատությունների և ՌԴ-ում հումանիտար ոլորտի գիտակրթական և ակադեմիական կառույցների շրջանակներում գործող հայագիտական կենտրոնների միջև: Դրանց թվում էին՝ ՌԳԱ Արևելյան ձեռագրերի ինստիտուտի Հայկական հիմնադրամը, Ուրալի դաշնային, Նիժնի Նովգորոդի ու Ռյազանի պետական համալսարանների հայագիտական կենտրոնները և այլն, որոնցում իրականացվում էին հայագիտական տարաբնույթ գիտական ուսումնասիրություններ: Դրանք արտացոլվում էին հրատարակվող մենագրություններում, նաև հայաստանյան գիտնականների համահեղինակությամբ լույս ընծայվող կոլեկտիվ աշխատություններում, ժողովածուներում, գիտական հոդվածներում և այլն: Ռուսաստանյան հայագիտական կենտրոնները կազմակերպում էին նաև հայոց պատմությանը, լեզվին, հայ մշակույթին, գրականությանը, հայկական սփյուռքին, հայ և ռուս ժողովուրդների պատմամշակութային առնչություններին նվիրված ինչպես համառուսաստանյան, այնպես էլ միջազգային գիտաժողովներ: Դրանց մասնակցում էին նաև մասնագետներ Հայաստանից: Ռուսաստանցի հայագետներն էլ մասնակցում էին Հայաստանում անցկացվող նման գիտաժողովների և միջոցառումների: Իսկ նշյալ գիտաժողովների զեկույցները հրատարակվում էին առանձին ժողովածուներով: Ռուսաստանի հայագիտական կենտրոնները հրատարակում էին նաև

պարբերականներ: Մասնավորապես, Նիժնի Նովգորոդի պետական համալսարանի հայագիտական կենտրոնը 2004 թվականից հրատարակում էր «Նաիրի» տարեգիրքը՝ Հայաստանի և Սփյուռքի մասին (Հովյան 2015):

ՀՀ-ի և ՌԴ-ի միջև կրթագիտական բնագավառում համապարփակ համագործակցության վառ արգասիքներից էր 2001 թ. սեպտեմբերի 15-ին երկու երկրների կառավարությունների միջև ստորագրված՝ Կրթության, գիտական աստիճանների և կոչումների վերաբերյալ փաստաթղթերի փոխադարձ ճանաչման մասին համաձայնագիրը (ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածու 1999–2001 թթ. 2002, 379–382): Այն ոլորտում կողմերի բարձր մակարդակի փոխվստահության վկայություններից էր:

Փոխգործակցությունը տեղեկատվության ոլորտում

XXI դ. սկզբին ՀՀ-ի և ՌԴ-ի միջև զարգանում էր նաև համագործակցությունը տեղեկատվության բնագավառում: Վերջինիս ամուր հենքն էր երկու երկրների միջև առկա լայն իրավապայմանագրային դաշտը: Շնորհիվ ստորագրված համապատասխան համաձայնագրերի՝ Հայաստանի տարածքում սփռվում էին «OPT-CHG», «PTP-Планета», «Культура» և «Мир» հեռուստաալիքների ծրագրերը: Կաբելային հեռուստատեսությամբ հեռարձակվում էին նաև ռուսաստանյան գրեթե բոլոր ալիքները: Հայաստանում 2009 թ. անցկացվեցին Ռուսաստանյան հեռուստատեսության օրեր: Այդ ընթացքում մի կողմից՝ «Հեռուստատեսության ռուսաստանյան ակադեմիա» հիմնադրամի, իսկ մյուս կողմից՝ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի, «Հայկական երկրորդ հեռուստաալիք», «Շանթ հեռուստաընկերություն» և «Արմենիա TV» ԲԲԸ-ների միջև ստորագրվեց համագործակցության մասին հուշագիր (Григорян 2018, 89): Հանրապետության ռադիոհեռերում ուրույն տեղն ունեին նաև մի շարք ռուսաստանյան ռադիոկայաններ: Միաժամանակ, Մոսկվայում և Երևանում հիմնվեցին թղթակցային կետեր: Հայաստանի տեղեկատվական դաշտում ներկա էին «РИА Новости», ИТАР-ТАСС, «Регнум», «Интерфакс» և ռուսաստանյան այլ տեղեկատվական գործակալություններ: Հայաստանում տեղական ներդիրներով հրատարակվում էին «Комсомольская правда», «МК Арапат», «Аргументы недели», «Аргументы и факты» թերթերի տարածաշրջանային մեկնակերպերը: ՀՀ-ում 2000-ականների սկզբին հրատարակվում էր 9 ռուսալեզու թերթ և 1 ամսագիր, բայց այստեղ աստիճանաբար պարբերականների բաժանորդների քանակը կրճատվում էր: Ընդ որում, ոչ միայն ռուսալեզու, որը պայմանավորված էր թե՛ ընթերցողների նյութական միջոցների սղությամբ և թե՛ այլընտրանքային համացանցային հրատարակությունների առկայությամբ (МИД России о борьбе и гибели русских СМИ в странах бывшего СССР 2010, 10 августа): ՌԴ տարածքում հայկական ԶԼՄ-ներից տարածվում էին «Республика Армения» թերթը և «Голос Армении» պարբերականի լրաքաղը (Հետխորհրդային երկրների հայկական համայնքների ինքնության խնդիրները և տեղեկատվական ռեսուրսները 2010, 164–169): Ռուսաստանում հրատարակ-

վում էին նաև մի շարք հայկական ռուսալեզու թերթեր և պարբերականներ: Սակայն ՌԴ-ում հայալեզու թերթերն ու ամսագրերը սակավության և եղածների ոչ բարձր որակի պատճառով շոշափելի ազդեցություն չէին թողնում տեղի հայերի ազգային նկարագրի պահպանման ու զարգացման վրա: Այդ տեսանկյունից հրատապ էր ռուսաստանյան տեղեկատվական հարթակում Հայաստանի պատշաճ մակարդակով ներկայացվածության ընդլայնումը:

Այդ ժամանակահատվածում կանոնավոր բնույթ ստացան երկու երկրների ՁԼՄ-ների ներկայացուցիչների անմիջական շփումները՝ փոխայցելություններ, համատեղ սեմինարների կազմակերպում, տեղեկատվական նախագծերի մշակում և իրականացում և այլն: Հատկանշական էր, որ ՀՀ և ՌԴ ՁԼՄ-ների ներկայացուցիչները հիմնականում բավարարվում էին երկու երկրներում տեղի ունեցող պաշտոնական իրադարձությունների լուսաբանմամբ:

Եզրակացություններ

Հումանիտար ոլորտում ՀՀ-ի և ՌԴ-ի միջև փոխգործակցությունը որոշ ընդմիջումից հետո քննվող ժամանակաշրջանում, հիմնվելով նոր ձևավորված համապարփակ իրավապայմանագրային հենքի վրա, աստիճանաբար ընդլայնվեց, կատարելագործվեց ու ստացավ նոր որակ: Միաժամանակ, հայ-ռուսական հումանիտար կապերի բնագավառում առկա էին նաև ներքոհիշյալ բացթողումները:

Իրավապայմանագրային ոլորտ. հումանիտար բնագավառում ստորագրված պայմանագրերի որոշ դրույթներ գործնականում այդպես էլ չէին իրագործվում: Այն հիմնականում պայմանավորված էր իրավաբանական փաստաթղթերում հումանիտար կապերի ամրապնդմանը նպատակաուղղված երկկողմ քայլերի հստակ համաձայնեցման ու համադրման համապատասխան մեխանիզմների դրույթների բացակայությամբ և լիարժեք փոխգործակցության ձևաչափի սահմանափակությամբ:

Կրթալեզվամշակութային բնագավառ. Եթե ՀՀ-ում թե՛ հայկական և թե՛ ռուսական կողմերը պաշտոնապես իրականացնում էին հանրապետությունում ռուսաց լեզվի տարածմանը նպաստող հետևողական քայլեր, ապա Ռուսաստանում հայոց լեզվի վիճակը հիմնականում բնութագրվում էր որպես երկակի: Չնայած նշմարվող որոշ առաջընթացին՝ այստեղ դրա պահպանման և տարածման հարցերը դեռևս լիարժեք լուծում չէին ստացել: Դրանց թվին էին դասվում ՌԴ-ում պետական հովանավորություն վայելող հայկական թեքումով հանրակրթական հաստատությունների ցանցի ընդլայնման, դրանք որակյալ մանկավարժական կադրերով համալրման ու անհրաժեշտ նյութատեխնիկական հիմքով ապահովման խնդիրները: Դրանց լուծումը թերևս պահանջում էր երկու երկրների պատկան մարմինների կողմից պատշաճ պետական հոգաձության և աջակցության առավել ակտիվ դրսևորում:

Տեղեկատվության ոլորտ. այստեղ հայ-ռուսական փոխգործակցությունում առկա էր դեռևս չօգտագործված ներուժ: Մասնավորապես, ՀՀ-ում և ՌԴ-ում

առկա սոցիալ-տնտեսական խնդիրների, երկկողմ տնտեսական նախագծերի իրականացման և նման այլ հարցերի ոչ բավարար լուսաբանման ֆոնի վրա առավելապես հրապարակվում էին պաշտոնական տեսակետներին համահունչ նյութեր: Մինչդեռ խիստ արդիական էր ՀՀ-ի և ՌԴ-ի միջև փոխհարաբերություններին առնչվող առանցքային խնդիրների հնարավորինս համակողմանի և մատչելի ներկայացումը: Դա երկու երկրների հանրությունների լայն շրջաններին հնարավորություն կընձեռներ ավելի համապարփակորեն ընկալելու հայ-ռուսական հարաբերությունները:

Այս ամենի հետ մեկտեղ ակնբախ էր, որ XXI դ. սկզբին ՀՀ-ի և ՌԴ-ի միջև հումանիտար կապերը համակողմանիորեն զարգանում էին՝ դառնալով երկու երկրների ռազմավարական, դաշնակցային հարաբերությունների խորացման էական գործոններից:

Շնորհակալական

Սույն հոդվածի թեմայի ընտրության, օժանդակության և արժեքավոր խորհուրդների համար շնորհակալություն եմ հայտնում պատմական գիտությունների թեկնածու Վաչե Հովակիմյանին:

Գրականություն/References/Литература

1. Գյուրջինյան Դ. 2022, Հայաստանում չունենք ռուսական դպրոցներ, բոլորը հիմնված են մայրենիի վրա, 15.06.2022, <https://armeniasputnik.am/202206159> (ներբեռնման օրը՝ 10.03.2026):
Gyurjinyan D. 2022, We do not have Russian schools in Armenia; they are all based on the mother tongue, 15.06.2022, <https://armeniasputnik.am/202206159> (Accessed on: 10.03.2026) (in Armenian).
2. ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 6, գործ 108, 141–143:
Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia (MFA RA), Historical-Diplomatic Department, List 6, File 108, 141–143 (in Armenian).
3. ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 13, գործ 103, 26:
MFA RA, Historical-Diplomatic Department, List 13, File 103, 26 (in Armenian).
4. ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 10, գործ 114, 112:
MFA RA, Historical-Diplomatic Department, List 10, File 114, 112 (in Armenian).
5. Հետխորհրդային երկրների հայկական համայնքների ինքնության խնդիրները և տեղեկատվական ռեսուրսները 2010, Ռուսաստանի Դաշնություն, Հայկական լրատվամիջոցները, Երևան, ՀՀ սփյուռքի նախարարություն, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ:
Identity Issues and Information Resources of Armenian Communities in Post-Soviet Countries 2010, Russian Federation, Armenian Media, Yerevan, RA Ministry of Diaspora, "Noravank" Scientific Educational Foundation (in Armenian).

6. ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածու 1999–2001 թթ. 2002, ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական տեղեկագիր, հրատարակության 1-ին տարի, N 3 (3), 12 հունիսի, 379–382:
Collection of International Treaties of the Republic of Armenia 1999–2001 (2002), Official Bulletin of the Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia, 1st Year of Publication, N3 (3), June 12, 379–382 (in Armenian).
7. ՀՀ միջազգային պայմանագրերի պաշտոնական տեղեկագիր 2005, ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական տեղեկագիր, հրատարակության 5-րդ տարի, N 8 (16), 28 դեկտեմբերի, 2006, 221–225:
Official Bulletin of International Treaties of the Republic of Armenia 2005, Official Bulletin of the Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia, 5th Year of Publication, N 8 (16), December 28, 2006, 221–225 (in Armenian).
8. ՀՀ Միջազգային պայմանագրերի պաշտոնական տեղեկագիր, երկկողմ միջազգային պայմանագրեր 2007, ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական տեղեկագիր, հրատարակության 6-րդ տարի, N 9 (17), 11 փետրվարի, 2008, 176–181:
Official Bulletin of International Treaties of the Republic of Armenia, Bilateral International Treaties 2007, Official Bulletin of the Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia, 6th Year of Publication, N 9 (17), February 11, 2008, 176–181 (in Armenian).
9. Հովյան Վ. 2015, Հետխորհրդային երկրների հայագիտական կենտրոնները, «Գլոբուս» վերլուծական հանդես, N 1, noravank.am/arm/journals/details.php?ELEMENT_ID=13161 (ներբեռնման օրը՝ 17.03.2026):
Hovyan V. 2015, Armenological Centers in Post-Soviet Countries, Globus Analytical Journal, N 1, noravank.am/arm/journals/details.php?ELEMENT_ID=13161 (Accessed on: 17.03.2026) (in Armenian).
10. Ռուսաստան–Հայաստան ընկերություն, ստուգված դարեր շարունակ. պատմական և վավերագրական ցուցահանդեսի գրացուցակ 2017, Մոսկվա, հրատ. նշված չէ:
Russia-Armenia Society, Tested Through Centuries: Catalog of a Historical and Documentary Exhibition 2017, Moscow, Publisher not specified (in Armenian).
11. Ռուսաստանը և Հայաստանը համաշխարհային և տարածաշրջանային քաղաքականության համատեքստում, Հիմնախնդիրներն ու հեռանկարները 2010, Վերլուծական զեկույց, Մոսկվա-Երևան, Եվրասիական հետազոտությունների ինստիտուտ:
Russia and Armenia in the Context of Global and Regional Politics: Problems and Prospects 2010, Analytical Report, Moscow-Yerevan Institute of Eurasian Studies.
12. Григорян Г. 2018, Гуманитарное измерение армяно-российских отношений, Россия и новые государства Евразии, N 1(38), 82–105.
Grigoryan G. 2018, The Humanitarian Dimension of Armenian-Russian Relations, Russia and the New States of Eurasia, N 1(38), 82–105 (in Russian).
13. Из доклада Министерства иностранных дел Российской Федерации, «Русский язык в мире» 2003, Москва, www.mid.ru (ներբեռնման օրը՝ 20.03.2026):
From the report of the Ministry of Foreign Affairs of the Russian Federation "The Russian Language in the World" 2003, Moscow, www.mid.ru (Accessed on: 20.03.2026) (in Russian).

14. История дипломатических отношений России и Армении 2006, www.ria.ru, 30 октября (обновлено 07.06.2008) (ներբեռնման օրը՝ 20.03.2026):
History of Diplomatic Relations between Russia and Armenia 2006, www.ria.ru, October 30 (Updated 07.06.2008) (Accessed on: 20.03.2026) (in Russian).
15. Комарова Р. 2009, Армянский язык для стран СНГ: учебник, Москва, «Рема».
Komarova R. 2009, Armenian Language for CIS Countries: A Textbook, Moscow, Rema (in Russian).
16. МИД России о борьбе и гибели русских СМИ в странах бывшего СССР 2010, 10 августа, Армения, Ереван, REGNUM, <https://regnum.ru> (ներբեռնման օրը՝ 27.03.2026):
Russian Ministry of Foreign Affairs on the Struggle and Death of Russian Media in the Countries of the Former USSR, 2010, August 10, Armenia, Yerevan, REGNUM, <https://regnum.ru> (Accessed on: 27.03.2026) (in Russian).
17. Оганисян В. 2012, О некоторых аспектах армяно-российского культурного сотрудничества, «21-й ВЕК», N 3 (23), 83–90.
Oganisyan V. 2012, On Certain Aspects of Armenian-Russian Cultural Cooperation, 21st CENTURY, N 3 (23), 83–90 (in Russian).
18. Освещение общей истории России и народов постсоветских стран в школьных учебниках истории новых независимых государств 2009, Доклад (Ред. А.А. Данилов, А.В. Филиппов), Москва, «Государственный клуб».
Coverage of the Common History of Russia and the Peoples of Post-Soviet Countries in school history textbooks of the new independent states 2009, Report (Eds. A.A. Danilov, A.V. Filippov), Moscow, State Club (in Russian).
19. Российско-армянское гуманитарное сотрудничество 2011, Справка ДИП МИД РФ, 12 октября, архив МИД РФ, <http://archive.mid.ru> (ներբեռնման օրը՝ 27.03.2026):
Russian-Armenian Humanitarian Cooperation 2011, Briefing of the DIP MFA RF, October 12, MFA RF Archive, <http://archive.mid.ru> (Accessed on: 27.03.2026) (in Russian).
20. Саядов С. 2013, Арменоведение в России: историографический очерк, Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները» 17–19 հոկտեմբերի, Ջեկուցումների ժողովածու, Երևան, «Գիտություն», 75–84:
Sayadov S. 2013, Armenology in Russia: A Historiographical Sketch, Second International Armenological Congress: "Armenology and the Challenges of the Modern Era" October 17–19, Collection of Reports, Yerevan, Gitutyun, 75–84 (in Russian).